«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ *Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ ՝սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում*

Հաստատություն ՝ *Ազատավան գյուղի մանկապարտեզ*

Դաստիարակ ՝ *Լաթոյան Ուստինա*

Ղեկավար՝ *Ժաննա Ավետիսյան*

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ I. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵ.....6

1.1 Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում.....6

1.2Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության ձևերն ու տեսակները կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծման համտեքստում.....8

ԳԼՈՒԽ II. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ԱՄՓՈՓՈՒՄ.....12

2.1 Համագործակցության կազմակերպումը մանկապարտեզում 12

2.2 Փորձարարական հետազոտություն.....13

Եզրակացություն.....17

Գրականության ցանկ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը թևակոխել է պատմական զարգացման մի նոր փուլ: Արմատապես վերափոխման է ենթարկվել տնտեսական համակարգը, որը հրամայաբար պահանջ է առաջադրում վերափոխել նաև մեր սերնդի դաստիարակության և կրթական համակարգի կազմակերպման հիմնահարցերը: Այսօր պետությունների համագործակցության արդիական հիմնահարցերից մեկը կրթական համակարգի վերակառուցումն է՝ հասարակության զարգացման ժամանակակից պահանջներին համապատասխան: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ: Զարգացած և դաստիարակված հասարակության հենքը կրթված և դաստիարակված սերունդ ունենալն է, այս ամենը սկսվում է վաղ մանկության շրջանից: Վաղ մանկությունը երեխայի աճի և զարգացման առանցքային փուլ է, քանի որ այդ շրջանի փորձառությունները կարող են ազդել անհատի կյանքի ողջ ընթացքի վրա: Յուրաքանչյուր անհատի ճակատագիրը դասավորվում է դեռ մանկուց: Ընտանիքի դերը և ազդեցությունը երեխայի զարգացման, անհատականության ձևավորման ողջ կյանքում անժխտելի է: Երեխաների դաստիարակության, զարգացման, ապագայի ձևավորման մեջ անփոխարինելի է ընտանիքի դերը:Նախադպրոցական հաստատությունները չեն փոխարինում ընտանեկան դաստիարակությանը, այլ լրացնում ու համակարգում են այն՝ համագործակցելով երեխաների ծնողների ու ընտանիքների հետ: Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը շարունակում է ընտանիքի աշխատանքը, օգնում ընտանիքին: Ուստի երեխայի անհատականության ձևավորման, ներդաշնակ զարգացման համար կարևոր է այդ երկու կարևոր օղակների արդյունավետ համագործակցությունը: Ասվածից հետևում է, որ հետազոտական աշխատանքի թեման ոչ միայն կարևոր է, այլ

նաև արդիական է բոլոր ժամանակներում:Իմ կատարած աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել և ներկայացնել մանկապարտեզ-ընտանիք կապի առանձնահատկությունները, առավելությունները երեխայի դաստիարակության հարցում՝ երեխայի, ընտանիքի և մանկապարտեզի տեսանկյունից: Ես եկել ենք այն համոզման, որ համագործակցության ճանապարհով ձեռք բերված գիտելիքները ավելի կայուն են ավելի կիրառելի:

Ավարտական աշխատանքի նպատակը՝ բացահայտել մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Ավարտական աշխատանքի խնդիրներն են՝

- Ուսումնասիրել և վերլուծել մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ տեսական դրույթները:
- Իրականացնել փորձարարություն բացահայտելու մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝

Հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ առկա գիտամանկավարժական ժամանակակից գրականության ուսումնասիրություն, համակարգում և վերլուծություն:

Մեթոդներ՝ զրույց, փորձարարական հետազոտության տվյալների և արդյունքների մաթեմատիկական վերլուծություն:

Ավարտական աշխատանքի տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ վերլուծել եմ ավարտական աշխատանքի հիմնախնդրի վերաբերյալ գոյություն ունեցող ժամանակակից մանկավարժական գրականությունը, քննարկել մի շարք հայեցակարգային տեսական դրույթներ:Վերլուծել մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Ավարտական աշխատանքը բաղկացած է՝ ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից:

Գլուխ I

1.1 Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում

Ընտանիքը եղել և մնում է անձի բարոյական դաստիարակման հիմնական օղակն ու վճռական գործոնը: Ընտանիքից է սկսում բարոյական դաստիարակման նախահիմքերի կառուցումը, որից հետագայում ձևավորվում և ամրապնդվում են անձի վարքի ձևերը ։Երեխան ծնվելով ընկնում է իր համար բոլորովին նոր վայր, դժվարություններով լի մի աշխարհ, որտեղ նրա հիմնական ու առաջին սյունը ընտանիքն է ։Երեխան աչքերը բացելով, տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ ։ Ծնողների վաղ ներգործությունները, որոնք նույնիսկ կարող են չգիտակցվել երեխայի կողմից, ազդում են նրա հետագա զարգացման վրա ։ Առհասարակ, դաստիարակչական ներգործությունների արդյունավետությունը կախված է ծնողների միջև առկա փոխհարաբերություններից, ընտանիքի կյանքի ձևից՝ «առողջությունից», բարեհաջողությունից, նրա երջանիկ մթնոլորտից։Ընտանիքում են դրվում երեխայի բարոյական, գեղագիտական,տնտեսագիտական դաստիարակման հիմքերը ։ Երեխայի համար ընտանիքը պատրաստի օրինակ է սեփական կյանքը կառուցելու համար ։ Նա աչքերը բացելով, տեսնում է իր ընտանիքը, նրա ավանդույթները, հարաբերություններն ու դրվածքները, ուստի ճիշտ է այստեղ հիշել այն արտահայտությունը, թե յուրաքանչյուր երեխա իր ընտանիքի հայելին է և նրա ծնողներն են պատասխանատու երեխայի հետագա ողջ կյանքի համար ։ Ծնողները շատ դեպքերում կարող են նույնիսկ չնկատել ,որ իրենց ամեն խոսքով, վարք ու բարքով օրինակ են ծառայում իրենց երեխաների համար ։ Երեխան ամենից առաջ իր ընտանիքում է տեսնում բարության, ուշադրության, քնքշանքի, ծերերի, երեխաների ու թույլերի նկատմամբ խղճահարության ու փոխօգնության զգացումների արմատները։ Երեխան յուրացնում է ընտանեկան ավանդույթներն ու սովորույթները՝ նախապատրաստվում է հետագա աշխատանքային գործունեությանը։ Ընտանեկան միջավայրում են դաստիարակվում այնպիսի սովորույթներ, ինչպիսիք են ինքնասպասարկումը, ինքնակազմակերպումը, պատասխանատվությունը, հոգատարությունը։

Ընտանեկան դաստիարակությունը կարող է նպաստել երեխայի մոտ ձեռներեցության, տնտեսվարության, հաշվենկատության, ինչպես նաև ինքնուրույնության,անկախության, ինքնասպասարկման կարողությունների ձեռքբերմանը և երեխայի արագ աճին:

Ինչ կարող են անել ծնողները.

- Ժամանակ հատկացնեն իրենց երեխային իսկապես ուշադիր նայելու համար: Նկատեն հիվանդության, էմոցիոնալ հուզվածության, քաշի ավելացման կամ կորստի, խնամքի պակասի կամ զարգացման փոփոխության հետ կապված նշանները :
- Ավելի շատ ժամանակ անցկացնեն ՝ լսելով երեխային : Հարցնեն ամեն ինչի մասին ՝ սկսած այն բանից, թե ինչպես են գործերը մանկապարտեզում, մինչև այն, թե որքանով է նրան դուր գալիս իրենց պատրաստած նախաճաշերը:
- Ծիծաղեն միասին : Պիտի թողնել, որ երեխան սովորեցնի ծնողին իր պես երեխա լինել, կատակել, զվարճանալ իր ձևով :
- Աշխատել աշխարհին նայել երեխայի աչքերով: Հիանալ առաջին ձյունով կամ աշնանային տերևների մեջ թավալ գալով :
- Պիտի հրաժարվել երեկոյան կարևոր ժամերը նվիրել արտաժամյա աշխատանքին
- Հիշել օրը ճիշտ սկսելու կարևորության մասին, որի մեջ մտնում է ոչ միայն լավ նախաճաշը, այլև ջերմ հրաժեշտը:
- Համբուրել երեխային, գրկել նրան, սեղմել նրա ձեռքը և ասել, որ սիրում եք նրան:

1.2Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության ձևերն ու տեսակները կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծման համտեքստում:

<<Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս
առանց համագործակցության>>
Ջեյմս Ուայթսոն

Ժամանակակից մանկավարժության գերխնդիրը ոչ թե երեխային սովորել սովորեցնելն է, այլ երեխայի մեջ սովորելու ցանկություն և նոր գիտելիքներ ձեռք բերելու անընդհատ ձգտման ձևավորումը՝ դրանով պայմանավորելով ուսումնական գործընթացի հաջողությունը, դաստիարակի և սաների փոխհարաբերությունները, ինչպես նաև երեխա - կոլեկտիվ համագործակցությունը: <<Երեխան կարող է և չլինել նշանավոր գիտնական , բայց դառնալ ինքնուրույն մարդ, ով ընդունակ է վերլուծել իր արարքները, վարքը, ինքնակատարելագործվել, իրացնել իրեն շրջակա աշխարհում , նրան անհրաժեշտ է սովորել>>:

Ինչպե՞ս երեխան կվարժվի կատարել իր աշխատանքը՝ խաղը, իսկ հետագայում ուսումը: Կլինի՞ արդյոք, ուսումը գրավիչ նրա համար, կստիպի՞ մտածել, քննադատորեն վերաիմաստավորել: Այս ամենը և շատ այլ բան կախված է նրանից, թե երեխաներին տանը ինչպես կնախապատրաստեն մանկապարտեզ գնալուն: Շատ կարևոր է երեխայի մոտ դրական վերաբերմունք ստեղծել մանկապարտեզի մասին, երբեք չվախեցնել, չսպառնալ, որ շուտով կգնաս մանկապարտեզ , քեզ կսաստեն, կպատժեն: Ընդհակառակը երեխայի ընկալումներում անհրաժեշտ է ստեղծել այնպիսի կերպար, որ մանկապարտեզը խաղի և զարգացման համար հաճելի միջավայր է, նոր ընկերներ ձեռք բերելու և հետաքրքիր էմոցիաներ զգալու հնարավորություն:Կախված երեխայի տարիքից, շփվողականության և ինքնուրույնության մակարդակից շատ նորմալ է, որ որոշ երեխաներ հեշտ են հարմարվում, որոշ երեխաների էլ ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ լինում հարմարման փուլը հաղթահարելու համար: Նախադպրոցական մանկավարժության մեջ շատ են մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության ձևերն ու տեսակները, որոնք ամուր հիմք են դնում ընտանիք – մանկապարտեզ համագործակցության ձևավորման համար, ինչպես նաև

օգնում են կազմակերպելու կրթական աշխատանքները սաների հետ, լուծելու ընտանեկան դաստիարակության մի շարք հարցեր: Մանկապարտեզի և ընտանիքի փոխադարձ կապի ձևերը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են: Համագործակցության ավանդական դարձած ձևերին ավելանում են ժամանակակից եղանակները, որոնք բխում են հասարակության նախադպրոցական կրթությանը ներկայացվող այսօրվա պահանջներից:Նախադպրոցական հիմնարկները ծնողների հետ աշխատանք կազմակերպելիս օգտագործում են բազմազան անհատական և կոլեկտիվ ձևեր: Ստորև ներկայացնում ենք մանկավարժական աշխատողների համագործակցության ժամանակակից ձևերն ու տեսակները՝ կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծման համատեքստում:

Այցելություն երեխայի ընտանիք: Համագործակցության այս ձևը շատ բան է տալիս ուսումնասիրության համար՝ կապ հաստատելով երեխայի, նրա ծնողների հետ, հստակեցնելով կրթության պայմանները: Մանկավարժական աշխատողը պետք է ծնողների հետ նախապես համաձայնեցնի այցելության հարմար ժամը, ինչպես նաև որոշի այցելության նպատակը: Անցնելով տան շեմը՝ մանկավարժական աշխատողը ֆիքսում է ընտանիքի մթնոլորտը, ինչպես նաև այն, թե ընտանիքի անդամներից ում է հանդիպում, ով է աջակցում զրույցին, ինչպես են ուղղակիորեն քննարկվում բարձրացված հարցերը:

Բաց դռների օրը՝ լինելով աշխատանքի բավականին տարածված ձև, հնարավորություն է տալիս ծնողներին ծանոթանալ նախադպրոցական հաստատությանը, նրա ավանդույթներին, կանոններին, կրթական աշխատանքի առանձնահատկություններին : Մանկավարժական աշխատողը կարող է ցույց տալ նախադպրոցական հաստատության աշխատանքի մի հատված (երեխաների կոլեկտիվ աշխատանք, զբոսանք և այլն): Շրջայցից և դիտումից հետո դաստիարակը կամ մեթոդիստը զրուցում է ծնողների հետ, պարզում նրանց տպավորությունները և պատասխանում հարցերին: Հարցազրույցներն անցկացվում են ինչպես անհատական, այնպես էլ խմբային: Երկու դեպքում էլ նպատակը հստակ սահմանված է. ինչ է պետք հստակեցնել, ինչով ենք ուզում օգնել: Զրույցի բովանդակությունը հակիրճ է, բովանդակալից ծնողների համար և ներկայացվում է այնպես, որպեսզի խրախուսի

ծնողներին խոսել: Մանկավարժական աշխատողը պետք է կարողանա ոչ միայն խոսել, այլև լսել ծնողներին:

Խորհրդակցություններ: Սովորաբար կազմվում է խորհրդատվությունների համակարգ, որն իրականացվում է անհատապես կամ ծնողների ենթախմբի համար: Խմբային խորհրդակցությունների կարող են հրավիրել տարբեր խմբերի ծնողներ, ովքեր ունեն խնդիրներ՝ երեխաների դաստիարակության հետ, կամ, ընդհակառակը, հաջողություններ կրթության մեջ (քմահաճ երեխաներ, նկարելու, երաժշտության ընդգծված ունակություններով երեխաներ): Խորհրդակցության նպատակը ծնողների կողմից որոշակի գիտելիքների և հմտությունների յուրացումն է. օգնել նրանց լուծել խնդիրները: Խորհրդատվության ձևերը տարբեր են (մասնագետի որակավորված զեկույց, որին հաջորդում է քննարկում, խորհրդակցությանը հրավիրված բոլորի կողմից նախապես կարդացված հոդվածի քննարկում, գործնական դաս, օրինակ՝ «Ինչպես սովորեցնել բանաստեղծություն» թեմայով. երեխաների հետ»): Ծնողները, հատկապես երիտասարդները, պետք է գործնական հմտություններ ձեռք բերեն երեխաներին դաստիարակելու գործում: Ցանկալի է նրանց հրավիրել ***սեմինարների:*** Աշխատանքի այս ձևը հնարավորություն է տալիս խոսել ուսուցման մեթոդների և տեխնիկայի մասին և ցույց տալ ինչպես կիրառել դրանք: Գործնական սեմինարներն ուղղված են նաև ընտանեկան մի շարք թեմաներ քննարկելու համար:

Կոնֆերանսը կարող է անցկացվել մեկ նախադպրոցական հաստատության շրջանակներում, սակայն կիրառվում են նաև քաղաքային մասշտաբների համաժողովներ: Կարևոր է որոշել բուն թեման: Գիտաժողովի համար պատրաստվում է մանկական աշխատանքների ցուցահանդես, մանկավարժական գրականություն, նախադպրոցական հաստատությունների աշխատանքն արտացոլող նյութեր եւ այլն: Համաժողովը կարող է ավարտել երեխաների, նախադպրոցական հաստատության աշխատակիցների, ընտանիքի անդամների համատեղ համերգով: Ծնողներին մանկավարժական գրականությանը ծանոթացնելու համար նպատակահարմար է ստեղծել շարժական գրադարաններ՝ հատուկ թղթապանակներում ընտրելով կոնկրետ թեմայով հոդվածներ:

Պատի տեղեկատվական թերթեր:

Պատ՝ տեղեկատվական թերթը կարող է օգտակար լինել ընտանիքներին միշտ թարմ տեղեկություն հաղորդելով նրանց ժողովների և հատուկ իրադարձությունների, ամենօրյա պարապմունքների բաշխման ցանկի, ընտանիքների համար նախատեսված միջոցառումների, ինչպես նաև՝ ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձի մասին:

Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցության համեմատաբար նոր ձևերից պետք է նշել ***հանգստյան երեկոները***՝ մանկավարժական աշխատողների, ծնողների, երեխաների մասնակցությամբ. սպորտային ժամանց, հավաքույթներ, ներկայացումների նախապատրաստություն, հանդիպումներ. «Եկեք ծանոթանանք», «Ուրախացնենք միմյանց» և այլն: Այս և ժամանակակից այլ համագործակցության ձևերը օգնում են ամրապնդել մանկավարժական աշխատողի և սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցչի) համագործակցությունը՝ ի նպաստ երեխայի:

ԳԼՈՒԽ II. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ԱՄՓՈՓՈՒՄ

2.1 Համագործակցության կազմակերպումը մանկապարտեզում

Հայաստանը լիիրավ ինտեգրվել է համընդհանուր տնտեսությանը, տարածաշրջանային քաղաքականությանը՝ իր քաղաքացիների կյանքի պայմանները բարելավելու և խաղաղությունը պահպանելու ու զարգացնելու նպատակով: Հայաստանի մանկապարտեզներն ու դաստիարակները այսօր առնչվում են միանման խոչնդոտների: Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, մանկապարտեզում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրաքային նոր մոտեցումները:

Աշխատանքը նպատակ է հետապնդում նպաստել կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն:

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս:

<<Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ դաստիարակը և ծնողները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար>>:

2.2 Փորձարարական հետազոտություն

Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ՝ կրթական աշխատանքների կազմակերպման ընթացքում արդյունավետությունը ուսումնասիրելու նպատակով իրականացրել եմ աշխատանքներ <<Արտաշատ համայնքի Ազատավան գյուղի մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ում: Հետազոտության առաջին փուլում իրականացրել եմ մշտադիտարկում՝ դիտումներ, լսումներ, պարզելու համար, թե ինչ մակարդակի վրա է գտնվում ծնողի և դաստարակի համագործակցությունը:

Դիտումները , լսումները ցույց տվեցին, որ մշտապես ակտիվ և համագործակցող են խմբի ծնողների 10%-ը:

Առաջին քայլս եղել է ծնողական ժողովի կազմակերպում:

Սույն թվականի նոյեմբերի 18-ին տեղի ունեցավ ծնողական ժողով միջին խմբում

Ժողովին մասնակցեց 25 ծնող:

<u>Օրակարգում</u>

1. Ժամանակին հաճախեն մանկապարտեզ:
2. Վարձավճարների վճարման ճիշտ ժամկետների մասին:
3. Հիգիենայի վերաբերող հարցերի քննարկում:
4. Ծնող- դաստիարակ արդյունավետ համագործակցության մասին:
5. Լսել ծնողների առաջարկությունները, մտահոգությունները և զրուցել այդ թեմայի շուրջ:
6. Հանդեսին վերաբերող հարցերի քննարկում:

Ժողովն անցավ ջերմ մթնոլորտում: Խոսվեց երեխաների մոտ մանկապարտեզի մասին սխալ տեղեկություններ տալու մասին:

Պետք չէ երեխաներին վախեցնել մակապարտեզով:Առավել հաճախ հանդիպող արտահայտություններն, որ լսել եմ մեր ծնողներից՝<<խելոք մնա ,թե չէ կթողնեմ մանկապարտեզում,>>,<<ինձ չլսես կզանգեմ դաստիարակիդ>> և այլն:

Թվում է, թե մեզ մեծահասակներիս համար պարզ ճշմարտություն և երեխային կարիք չկա բացատրելու, բայց պատկերացրեք երեխան, ով իր ծննդի օրից սկսած եղել է մայրիկի, տատիկի կամ ընտանիքի անդամների մշտական խնամքի տակ կտրուկ գնում և ժամեր շարունակ մնում է իր համար անծանոթ, օտար, խորթ միջավայրում:

Անպայման երեխային պատմեք, թե ինչ է անելու մանկապարտեզում, օրինակ երեխաների հետ խաղալու է, շատ խաղալիքներ են լինելու, բակում կա սղարան, ճաշիկ են ուտելու, այնուհետև քնելու են: Ես կողմ եմ, որ երեխան ի սկզբանե չմնա ամբողջ օրով, սկզբում մնա կարճ ժամանակով, հարմարվի, որպեսի հնարավորինս անցավ լինի անցումը նոր առօրյային:Չի բացառվում, որ անկախ նախապատրաստական միջոցների, միևնույնն է երեխան կլացի, նամանավանդ երբ խմբում լինում է երեխա ով հուզվում է, մյուսները ևս սկսում են տագնապել, ընդօրինակել և նույն ձև հուզվել:Ամենակարևորը ծնողներ ջան, դուք ինքներդ պատրաստ եղեք, որ ձեր երեխան այսուհետ լինելու է ուրիշի խնամքի տակ, փորձը ցույց է տալիս, որ հաճախ ծնողների անհանգստությունները այնքան մեծ են լինում, որ խանգարում են հարմարմանը: Ուստի շատ կարևոր է նաև մանկապարտեզի, եթե կա հնարավորություն նաև դաստիարակի ու դայակի ընտրություն անել, ովքեր համապատասխանում են ձեր չափանիշներին և դաստիարակության մոտեցումներին: Նմանատիպ պլանավորումը օգնում է ինչ-որ չափով թուլացնելու թե՛ ծնողի, թե՛ երեխայի լարվածությունը և հնարավորինս հեշտացնում հարմարման պրոցեսը: Այս ամենը ներկայացնելուց հետո լսեցի ծնողներին:

Հետազոտության ձևավորող փուլում իրականացվել է **խորհրդատվություն** ծնողների շրջանում մանկավարժական գիտելիքների տարածման նպատակով:Յուրաքանչյուր ծնողին փորձում էինք բերել այն համոզման, որ իրոք չպետք է ամեն ինչ դիտարկել սեփական երեխայի շահերից ելնելով ,քանի որ վերջինս կարող է հանգեցնել մի շարք անցանկալի երևույթների՝ էգոիզմ , եսամոլություն :

Ծնողների հետ միասին քննարկեցինք ու մշակեցինք այն սկզբունքներն ու մոտեցումները, որոնք անհրաժեշտ են ընտանիքում երեխաներին համակարգված դաստիարակության համար:Ծնողներին տվեցինք ընդհանուր խորհուրդներ երեխայի զարգացման ընթացքում առաջացող դժվարությունների հաղթահարման վերաբերյալ, առաջարկեցինք նրանց ակտիվ մասնակցություն ցուցաբերել և բարձրացնել իրենց հուզող հարցերը , ներկայացրեցինք նախադպրոցական տարիքի երեխաների հուզական զարգացման առանձնահատկությունները , խառնվածքի տիպերը, ինչպես նաև տեղեկատվություն տվեցինք ծնողներին թե ինչպես օգնեն ագրեսիվ , անհաշտ վարքագիծ դրսևորող երեխաներին:

Ծնողների հետ համագործակցելու, համագործակցային խմբեր ստեղծելու նպատակով առաջարկեցի միավորվել և միջոցառման թե' բեմական հագուստը, թե' երեխաների վարսերի հարդարումը, և թե բեմի ձևավորումը կատարենք ինքներս:Կազմեցինք խմբեր՝

- Դերձակների խումբ(7 ծնող)
- Դիզայիներների խումբ(5)
- Վարսահարդարների խումբ(6 ծնող)
- Բեմական ատրիբուտներ պատրաստողների խումբ(4 ծնող)
- Նկարիչների խումբ(3 ծնող)

Այս համախմբվածությունը և եռուզեռը ոգևորեց նույնիսկ ամենապասիվ ծնողներին:

Ծնողների հետ միասին ունեցանք գեղեցիկ միջոցառում:

Առանձնահատկությունները, որոնք գրանցեցի կարճ ժամանակահատվածում հետևյալն էին.

Նորի նկատմամբ հետաքրքրվածություն

Նախաձեռնողականություն

Ակտիվություն

Անկաշկանդվածություն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իմ դիտարկումների ընթացքում հանգեցինք այն եզրակացության ,որ մանկավարժական աշխատողի և ծնողի (նրանց օինանական ներկայացուցիչների) համագործակցությունը չափազանց կարևոր դերակատարում ունի մանկապարտեզում կրթական աշխատանքների գրագետ կազմակերպման համար: Փորձարարական հետազոտության ընթացքում ծնողների մանկավարժական գիտելիքների ձեռքբերման նպատակով կազմակերպվեցին հետևյալ աշխատանքները՝ ծնողների հետ վստահելի և գործնական հարաբերությունների ստեղծում, հոգեբանամանկավարժական գիտելիքների հարստացում, ծնողերի մանկապարտեզ այցելելու պարբերականության ապահովում, համապատասխան տեղեկատվության տրամադրում, մանկապարտեզում իրականացվող որոշակի աշխատանքներին ծնողների ներգրավում:

Երբ ծնողներն իրենք են սահմանում երեխայի մոտ որևէ կոնկրետ կարողություն դաստիարակելու կամ սովորեցնելու խնդիրները և դրանք լուծելու քայլերը՝ կանոնները, ավելի պատրաստակամ և հետևողական են այդ կանոնները պահպանելու և մանկավարժի հետ այդ ուղղությամբ համագործակցելու հարցում:

Ուսումնասիրելով և մշակելով մանկավարժական աշխատողի և սաների ծնողների (նրանց օինանական ներկայացուցիչների) համագործակցության տարբեր ձևերը, պարզեցինք, որ դրանք կարող են լավագույնս նպաստել փոխվստահության ձևավորմանը, նաև օգնում են միասին պլանավորել երեխաների կրթադաստիարակչական աշխատանքները: Նաև պարզեցինք, թե որքանով են ուսումնասիրվող մանկապարտեզում հետազոտության մեջ ընդգրկված սաների ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները) համագործակցում մանկավարժական աշխատողների հետ՝ ներգրաված լինելով կրթական աշխատանքների կազմակերպման մեջ:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ միայն ճիշտ և գրագետ համագործակցության միջոցով, ինչպես նաև փոխվստահությամբ կարող ենք նպաստել երեխաների կրթական և դաստիարակչական մի շարք հարցերի լուծմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանդրյան Է.Ա. Մեր երեխան, նրա զարգացումն ու դաստիարակությունը, Երևան 1989թ., էջ 42-43
2. Երկխոսություններ դաստիարակության մասին, Գիրք ծնողների համար, Վ.Ն. Ստոլետովի խմբագրությամբ, Երևան 1980թ., էջ 30
3. .Յու.Ամիրջանյան,Ա.Ա.Սահակյան <<Մանկավարժություն>>
4. <<Մանկավարժական միտք>>ամսագիր,2014թ 5.<<Նախաշավիղ>>-6,2009
5. Մակարենկո Ա. Ս. «Դաստիարակություն ծնողության վերաբերյալ», 1940թ.
6. Մարության Ա. Ս. , Դալլաքյան Ա. Մ. «Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք, Երևան 2008թ.
7. Միտոյան Հասմիկ, Սմբատյան Լալա «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան 2010թ.
8. https://lib.armedu.am/article/9220
9. https://annakhachatryan25.wordpress.com/
10. Krtahartak@editprint.am